



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22851



B.G.W. 400000
1902

ԵՎՐՈՍՅԻ ՀԱՅ ուսանողական միության տեղե-

կադիր պատրաստված 5-րդ համագումարի
համար: Ժը ներ, (Ի անունի) տպ. Ա. Ղազար, 1902.)

3252 21սմ.

378
5-74

201

2002

2010

三

270

١٩٩٦-٥٧



ԵՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ՄԻԱԲՈՅԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ԵՒ ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐԻՆ

ՊԵՂԵՐԱԼԵՐ

Համաձայն մեր «Կանոնադրութեան» 23^{րդ} յօդուածի հրատարակում Եսոք 1902 թւի համագումարի համար, — որ պիտի քացվի Ժընեւում, մարտ 31-ին, — Ներկայ Տէղեկագիրը, որը պարունակում է՝

- 1) Քաղուածքներ Համագումայի արձանագրութիւններից
 - 2) Քաղուածքներ Կարգադիր Յանձնաժողովի Լիազօր Կօմիտէի գործերից
 - 3) Վիճակագրական տեղեկութիւններ Եւրոպայի հայուսանորութեան մասին :
 - 4) Միու թեամ Կանոնադրութիւնը

5) Գրամական հաշիվ (տպագրուած առանձին):
Ցիւրիխի Եւ մասնաւանդ՝ Արևիսինի Համագումարների
արձանագրութիւնները մի քանի կարեւոր պատճառներով,
չնոր զետեղում ներկայ Տեղեկագրի մէջ Եւ բանականութեան
շնոր շատ հակիրք քաղուածքներով:

Բացի դրանից Միւսխեմի Համագումարից յետոյ ունեցած գործոնէութեան մանրամասն համարատուութիւն կը ներկայացնուի առաջիկայ Համագումարին, եւ հետեւաբար նա լուս կը տեսնէ միայն լազորո, աերեւասա որի մէջ-

1902 *Wenatchee* 10

July. Annual meeting of members.

11. Additional features - 111

զարդ բայութ պատճենահօսմ ի ընալք ընտառապէլ . 2

մասնաւոր մաքուցաբառ վերըն և կրտսեամբան

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԳՈՒԽԱՅԻ

(፭፻፲፻፲፻ 1900)

(ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ)

Եւրոպայի հայ Ուսանողական Միութեան երրորդ համազումարը տեղի ունեցաւ Յիւրիխի մէջ, 1900 թւի հոկտեմբերի 12ին. և տեղի չորս օր:

Ներկայ էին 14 անդամներ, մեծ մասով Գերմանական Ուսանողական քաղաքներէն. Երկուքը միայն պատգամաւո՞մ դրնէվէն և լօգանէն:

Համագույմարը հարուստ չեր դասախոսութիւններով ,
ընդամէնը կարդացուեցան երեք դասախոսութիւն . այն է :

1º. «Հայ թնտահիքը» Ա. Ահարոնեան, ուսանող Լոգանի համալսարանի:
2º. «Միուրեան բնիած թշղուրիէկը» Բ. Արզսեան,

3º . « Քաղաքական Գրամիանորիւնը հայերի մէջ » և
Մարտնեան, ուստանող ծընէլի համարանի:

Սակայն, սր խոդիրը, որով չատ կարենութեմ ստացան
Յիւրիիի համագումարը, Կանոնագրութեան վերակազմու-
թեան խնդիրն էր, որուն զիւսաւրապէս նույրուեցան նիս-
տերը:

Գրեթէ միաձայն որոշուեցաւ հիմնովին ընդունյանել Միութեան նպատակը՝ որպէս զի նա՛ իրուե մի մարմին, պարտաւորութիւն յանձն առնէ զբաղուիլ հայոց հարցով և արձագանք տայ հայ ժողովրդի այժմեան կենսական կարիքներուն։ Այդ մաքով «Միութեան» նպատակը խմբազրուեցաւ այսպէս։

4. Բարոյական կապ հաստատել Եւրոպայի հայ ուսանողների և ուսանողական խմբերի մէջ:

2. Նպաստել նրանց ծանօթութեանը հայոց կեանքի և
մասնաւորապէս հայերի քաղաքական կացութեան հետ:

3. Զգուել ծանօթացնել Հայերը եւրոպացիներին :

4. Հրատարակել հայոց հարցին վերաբերեալ և նոյն հարցին նպաստող՝ ինքնուրոյն և թարգմանական գրքեր հայերէն լեզով։ Եսյնպէս և օտար լեզուներով, եթէ կարիք լինի։

ԾԱՆՈԹ. Միութիւնը կարող է միւթապէս օգմել նրապայում գոյութիւն ունեցող հայկական ուրիշ հիմնարկութիւններին՝ թոյն թափառակիմ ծառայող նրատարակութիւնները ամելու համար։

Կանոնագրութեան մէջ մտցուեցաւ մի բոլորովին նոր մարմին, կիազօր կօմիտէ, հինգ անդամէ բաղկացած, որու պաշտօնը պիտի ըլլոր ա) կազմել կոնֆէրանսներ երրորդական գոնազանքագրում, բ) ուղարկել կարևոր դէպօ քերում ներկայացնուցիչներ, գ) պրօպագանգ անել երրորդական մամուլի մէջ հայերի և հայկական գործերի օգտին և դ) կազմակերպել և ընթացք տալ զրգերի հրատարակութեան գործին, որի մասին յիշտակւած է 4-րդ յօդւաշծում:

Բացի առկէ, որոշուեցաւ որ - Ա. Գասախօսութեան առարկայ կարող են ըլլալ միայն այն նիւթերը՝ որոնք անմիջական առնչութիւն ունին Հայկական կեանքի հետ (յօդ. 18.) Բ. Լայնացուեցաւ Համազումարի Լիալորութիւնը (յօդ. 19.) Գ. Բարեփոխուեցաւ ընտրութեան սխառէմը (յօդ. 10.) Դ. Աւելի ընդլայնուեցաւ Համազումարներու մասնակցողներու շրջանը (յօդ. 25) և Ե. Ծննդուեցաւ նախարարութիւնի սխառէմը :

Համագումարի առաջին նստին մէջ Լայպցիկի կարգադիքը Յանձնաժողովի նախագահը ներկայացուց համարատութիւն, որկէ կերևայ թէ Յանձնաժողովը զբաղուած է եղեր չորս Խընդրով. Ա.) Կազմել Համագումար. Բ.) հաւաքել վիճակագրական տեղեկութիւններ. Գ.) ժողվել անդամավճարները և Դ.) հրատարակել տեղեկադիքը։ Վերջինը սակայն շերագործուեցաւ։

իններորդ կյանք . «Միութեան» Աշանի որոշումը (Կառնոնադր . յօդ . 29.)

Ընտրութիւն Կարգադիր Յանձնաժողովի քաղաքի : Որոշումն առաջիկայ 1902 թւի համագումարի տեղի :

Ընտրութիւն Լիազօր կոմիտէի :

Համագումարի փակումը :

Կառնոնադր . յօդ . 29.

Ապրիլի 1 ի բացման (նոտին մէջ)՝ Կարգադիր Յանձնաժողովի նախագահը ներկայացուց մանրամասն համարատըւութիւն Միութեան գործունէութեան մասին նկամ Յիւրիկի համագումարէն մինչև Միունիքինի համագումարը , որու գլխաւոր կէտերը մէջ կը բերենք .

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴԻԾԻ ԽԵՆՔՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Բնկերներ .

«Ներկայ Համագումարը չորրորդն է՝ Միութեան հիմնարկութեան օրից , և առաջինը մեր և Կանոնադրութեան» վերակազմումից յետոյ : Առաջին Համագումարը տեղի ունեցաւ . Հայտելիքը , ապրիլի 12-15 , 1897 թարի : Երկրորդը՝ դարձեալ Հայտելիքը , մարտի 27-31 , 1899 թուրի : Երրորդը՝ Յեւրիխում , անցած 1900 թուրի , հակամեմբերի 10-14 : Առաջին Համագումարին ներկայ էին 24 հոգի : Երկրորդին՝ սկզբում 45 , որ ժաղավի աեւողութեան ընթացքում հասաւ 24 : Երրորդն՝ 44 , որոնցից երկուսը պատգամաւորչներ՝ Ժընէվից և Լոգանից : Ինչպէս աեսնում էք , նախորդ երեք Համագումարներին մասնակցող անդամների թիւը առ տիհանաբար իջնումէր : Վերջինը , Զորբորդը՝ մի բացառութիւն , և կատարելապէս աջողված ներկայ եղաղների թուով :

Յիւրիխի Համագումարը Ժընէվի ուսանողութեան յանձնեց , համաձայն կանոնադրութեան , իր միջից կարգադիր Յանձնաժողով ընտրելլ : Այդ ընտրութեան համար՝ Ժընէվում տեղի ունեցաւ մի ընդհանուր ժողով , ներկայութեամբ 31 անդամների : — Կարգ . Յանձնաժողովի անդա-

մերը ընտրվեցին ձայների առաւելութեամբ Պար . Խ . Մ . Ք . Ֆ . Մ . Յ . Ի . Պ . Ջ . և Գ . Վ . իսկ փոխանդամներ՝ Օր . Հ . Զ . և Պ . Ա . Ֆ . Երկրորդ անդամը , անձնական պատճառներով հրաժարական տուեց և առաջին Փոխանդամը՝ հրաւիրվեց նրան փոխարինելու :

Կարգագիր Յանձնաժողովի առաջին գործը եղաւ նոր կառնոնադրութեան հաստատութեան խնդիրը : Աչս թէ ինչպէս :

Երրորդ Համագումարը՝ թէ և ոչ աջող անդամների թուի կողմից ինչպէս և դասախոսութիւնների քանակով բաւական արգիւնապեր եղաւ «Կանոնադրութեան» վերակազմուչ թեան տեսակիշտից : Ուսանողական խմբերի կողմից արգէն գանգամներ էին լովում հին կանոնադրութեան անբաւարար ծրագրի դէմ , իսկ Ժընէվի Ուսանողութիւնը թէ իր պատճամաւորի և թէ յատուկ զրութեան միջոցով շեշտել էր որ անհրաժեշտ է «Միութեան» գործունէութեան մէջ մտցնել՝ Հայերի քաղաքական կացութեամբ հետաքրքրվելու պահանձը : Ուսանողական այդ արամագրութիւնները Համագումարի կողմից շատ լաւ ընդունելութիւն գտան , և չէնց այդ մոքով էլ խմբագրվեց նոր «Նախագիծը» : Բաւական է մի փոքր համեմատութիւն՝ հին և նոր կանոնադրութեան այդ տարրերութիւնը նկատելու համար : Նոր — Կանոնադրութեան 2-րդ , 3-րդ , 4-րդ ինչպէս 18 , 19 , 25 , 27 և 28 թիւ յօդուածները այդ տարրերութեան հիմն են կազմում : Նոր «Նախագիծը» Համագումարի միաձայն ընդունելութեան արժանացաւ . բայց դրանով խնդիրը չէր լուծված . — Հարկաւոր էր բոլոր ուսանողական մարմինների կարծիքը և հաւանութիւնը . ինչպէս այդ պահանջում էին — Հին կանոնադրութեան VII պրակի յօդուածները :

«Նախագիծը» տարագրվեց և ուղարկւեց Ուսանողական խմբերին , ինչպէս գույք արգէն գիտէք այն շրջաբերականից , որ տարածվեց 1900 թ . նոյեմբերի 25ին : Ներկայ թուի յօնվարին տեղի ունեցաւ նոր կանոնադրութեան հաստատութիւնը , որի մասին կարգադիր Յանձնաժողովը յայտարարեց ի գիտութիւն բոլորի՝ յատուկ շրջաբերականով :

Ուրախութեամբ շեշտումնք այն կէտը , որ «Նախագիծի» հիմնական , նոր կէտերը համարեա ընդհանուր ընդունելու թիւն գտան ընկերների կողմից , և տարրեր կարծիքները վերաբերում են աւելի երկրորդական , տեխնիքական կէտերին ,

քան թէ հիմնական առաջարկներին։ Եղաւ միայն մի ուսանողական մարմին, որ իրան յայտարարեց դէմ նոր կանոնադրութեան գործեան, դա ֆրանսիայի Մ. քաղաքի հայ ուսանողութիւնն էր։ Պարագ եմ համարում Զեր ուշադրութիւնը հրաւիրել այս կէտի վրա, նոյն այն պատճառով, որ այդ կարծիքը ինչպէս պնդում են ֆրանսիայի հայ ուսանողութեան մօտ ծանօթ անձնեն, լոկ Մ. — քաղաքի ուսանողների կարծիքը չէ, այլ և ուրիշ շատ քաղաքներինը ֆրանսիայում, և երկրորդ այն պատճառով՝ որ դա մօսաւորապէս արանյայուութիւն է մեր թրքահայ ընկերների արամադրութեան։ Մերժելով այն հիմնական յօդուածները որոնց վրա մատնանիշ եղանք վերև, Մ. — քաղաքի մեր ընկերները (10 ձայնով ընդդէմ 1-ի) հետեւալ պատճառաբանութիւնն են բերում։

« 1. Մէծ մասնից թրքահայ ուսանողներ հնօր և պատճառի ցանկաստամ վերադրծուու շատ սուղի կը մստի, եթէ հայ ուսանողական «Միութիւնը» քաղաքականութիւնմբ զբաղի։

« 2. Արդէթ ուսպանութիւն և քաղաքականութիւն իրարմէ շատ ննաւ եմ, և

« 3. Եւրոպական հայ ուսանողական Միութիւնը գտնուած հայ կուսակցութիւններու թիւը համար մալ աւելցնելէ զատ, ուրիշ արդինք չը պիտի ունեմայ, իթէ քաղաքական խմբներով զբաղի։ (Քաղուած պատասխանից 23 զիստ, 1900)։

Եւ այդ պատճառաբանութիւններից յետոյ, որոնց արժանաւոր գնահատութիւնը թողնում են Համագումարին, նրանք առաջարկում են որ «Միութիւնը» ազուր գրական և գիտական օրկան մ'ալ ունենայ։

Բարեկաղդաբար այդ տեսակ մի կարծիք ուրիշ պաշտպաններ չ'ունեցաւ, և Նոր Կանոնադրութիւնը հաստատվեց ուսանողական մարմինների կողմից և տաղագրվեց այն ձեռվ, ինչպէս որ դուք ունիք ձեր ձեռքի տակ։

Ի դեպ, Մի քանի քաղաքներ, ինչպէս Պարիզը, արձագանք չը տևեցին մեր հրաւերներին, և ինչպէս երևումէ. լոկ այն պատճառով, որ այնակող հայ ուսանողները, ներքին երկառակութիւնների շնորհիւ, մի մարմին չեն կազմում։ Միուները, ինչպէս որ, Հալլէ, Գէօթէն, իրանց ձայնը չը կարողացան տալ, որովհետեւ հասցէ չ'ունենալու պատճառով, մենք նրանց անկարող եղանք ժամանակին ուղարկել թղթերը։ Վերջապէս Հայտերի քաղաքի մեր ընկերները՝ ձեսն։

պահ մնացին մի թիւրիմացութիւն պատճառով, որը մըտցը ցըրտծէ։ «Օրակարգի» հինգերորդ նիստի պարագմանքը ների մէջ, և որը, յոյս ունինք՝ կը պարզվի ցանկալի կերպով։ Այդ տեսակ Ուսանողական խմբերին՝ կարգ յանձնաւողակը հրաւիրեց ներկայացնել իրունց կարծիքները Համագումարին, որպէսզի ոչպէս ձայնը անևելի չմնայ։ Կանոնադրութեան » հաստատումից յետոյ՝ կարգ Յանձնափողութեան » համագումար հրաւիրելու ինդիրը։ Գրա գլխաւոր շարժակալիթը միայն այն էք, որ Զատկի տօներն աւելի յարմար էին, քան աշնան արձակուրդները, երբ ուսանողները ցրված են լինում, այլ և այն, որ առանց Համագումարի կարգ, յաձնափողովը լիազօրութիւն չ'ուներ շաշակումարի գործերի ձեռնարկելու։ Հարկաւոր էր գծագրել գործունէութեան սահմանները, ընտրել Վիազոր կօմիտե, որի ձեռքնուն է ամփոփված, ըստ Կանոնադրութեան, գլուխաւոր աշխատանքը, վերջապէս մտածել զբանական միջոցներ գտնելու մասին ։ Խնդիրներ, որոնց լուծողը կարգել լինել միմիան այս ժողովը։ Համագումարի ժամանակը՝ միաձայն որոշվեց ապրիլի 1-7։ Տեղի վերբերմար ձայները բաժանվեցին։ Գլխաւոր մրցումը Միունիտնի և Ժընէվի մէջ էր։ Վերջնական քուէարկութեան ձայները արւած էին։ Միունիտն ։ 68, Ժընէվ ։ 52, Հայտելլերդ ։ 46, Ցերլին ։ 4, Թիւզուն ։ 2։ Միունիտն ընտրելու գլխաւոր շարժակալիթը այն էր որ գերմանական ընկերներին դիւրութիւն արվի աւելի մեծ թւով ներկայ լինելու ։ Համագումարին, քանի որ չվեցյերիական որևէ քաղաքի, յատկապէս Ժընէվի վերաբերմար՝ հեռաւորութիւնը միշտ շեշտվում էր շատերի կողմից։ Գալ ատրվայ վերաբերմար, կարգ, Յանձնափողովը այն կարծիքի է, որ կանգ պիտի առնել Ժընէվի վերաբերյալ, քանի որ յօյս կայ ապագայում գէպի ի Միութիւնը զրաբել Ֆրանսիայի և Անգլիայի ուսանողներին, որոնց համար այդ քաղաքը յարմարութիւններ ուշնի։ Եւ, ինչպէս գիտեք, այժմեան «Կանոնադրութեամբ» այդ ընտրութիւնը յաձնված է ոչ թէ ուսանողական մարմններին, այլ անմիջապէս Համագումարին։ Մի հարց, որի մասին լրջորէն պիտի խորհի և ներկայ ժեղովը ։ այդ նիւթեական խնդիրն է։ «Միութեան» միջոցները շատ համեստ են, այնպէս որ ներկայ միջացնե-

րով մենք կտտարելապէս անկարող էնք ձեռնարկել մեր նպատակների աջող իրագործման։ Կարգադիր յանձնաժողովը առանձին խնամքով վերաբերվեց այս նիւթին և անշարաւար համարելով լոկ անդամավճարները, սրոշեց դիմել հանգանակութեան. սկսեց այդ նուխ Ժընէլ, և ապա դիմեց միւս քաղաքներին ինչպէս Բերլին, Միւնիէն, Լոզան, Մինք յայս ունինք, որ Համագումարին ներկայ պատգամաւորները՝ վերադառնարով իրանց քաղաքները՝ նոյնպէս հանգանակութեան կը լունան և ուեւ արդիւնքի կը հասնէն։

Ջըրաւականարով հանգանակութեամբ Եւրոպայում մենք փորձեցինք նայն անել կովկաս։ Օգուտ քաղելով մեր երկու ընկերների՝ Պ. Պ. Վ. Ք. և Ո. Գ. և Ռ. ճանապարհորդութիւնից գեղի հայրենիք, ինդրեցինք ձեռնարկել հանգանակութեան «Միութեան» օգտին։ Նրանք երկուն էլ ներկայ էին անցեալ Համագումարին, մօտիկ ծանօթ են գործերին, քաջ գիտեն, որ մեր ծրագիրները իրագործելու համար՝ սկզբից արդէն անհրաժեշտ է 12-15000 ֆրանք, և սիրով յանձն ասան այդ պարտականութիւնը, Նրանց արվածեն հանգանակութեան թերթեր, պաշտօնական լիազօրութիւն նուերներ հաւաքելու և նոյն իսկ նուիրատու խմբեր կազմելու գանագան քաղաքներում։ Եւ եթէ այս տեսակ մեր փորձերը աջող վերջտնան – «Միութիւնը» կարող է մօտիկ ապագայում ձեռնարկել որ և է շաշափելի գործի։ Հակառակ դէկբում ուսանողական այս մեծանուն մարմինը ստիպված պիտի լինի իր անուան անշամապատասխան փոքրիկ ձեռնարկների շրջանում մնալ։ Տարաբախտարար միջացների պակասութիւնը թոյլ ըստեց կարգադիր յանձնահողովին ձեռնարկել՝ — Եւրոպացիների ձեռքով — կանֆերանսներ կազմակերպելուն, ինչպէս այդ թօլլատրում է «կամունազրութիւնը»։ մի գործ, որ կարեւոր նշանակութիւն ունի Եւրոպական հասարակաց կարծիքը յօդուա հայոց հարցի զրգութու աեսակէաից։ Մի փորձ միայն արեցինք։ Օգուտ քաղելով այն հանգամանքից, որ Բելգիական պարլամենտի անդամ, յայտնի սօցիալիստ Էմիլ Վանդերվելդ պիտի զար Ժընէլ, կարգադիր յանձնաժողովը դիմեց նրան մի նամակով, ինդրելով մի գառախօսութիւն կարգալ հայոց հարցի մասին։ Բելգիացի հայասէր գործիքը իր պատասխանի մէջ ցաւ է յայտնում։

մը անկարողէ մնալ Ժընէլ աւելի քան նախօրոշւածը, աւելացնելով որ մի ուրիշ անգամ, երբ ասիթը ներկայանայ՝ ուրախութեամբ կը կատարի միութեան այդ առաջարկը։ Ուրիշ փորձեր մենք անկարող էինք անել և այն պատճառով, որ ժամանակ չը կար, և Համագումարը արդէն նշանակվածէր։ Համագումարում լինելիք գասախօսութիւնների վերաբեր մամբ կարգ։ յանձնաժողովը որոշեց չը բաւականալ ու անողնելով, այլ գիմել ուրիշ հիմնարկութիւններին և անձանց ես, ինչպէս այդ տրամադրում է «Կանոնադրութեան» յօդ։ 25։ Այդպիսի գիմաւելիքներ կղան՝ 1). «Դրոշակի» խմբագութեան, — որը պատասխանեց թէ յատուկ ներկայացուցիչ կ'ունենայ Համագումարում և կը կարգայ դասախուսութիւն։ 2). «Վարչութեան» լրագրի խմբագիր Պ. Մինսս Զերագին, առաջարկելով խօսել «Հայոց հարցը Բերլինի կօնդրեառում» նիւթի վրայ, — պատասխանեց, որ սիրով կը կատարի մեր առաջարկը, եթէ Համագումարը կայանայ Պարիզում։ 3) «Հնչակեան» կուսակցութեան վարչութեան, — պատասխան չ'ունինք։ 4) վերակազմեալ Հնչակեան կենդրութիւն՝ — պատասխան չ'ունինք, 5) «Արմենիանի խըմբագիր Պ. Մ. Փոթուգակեանին» – ինդրելով կատարականի մասին, — պատասխանեց, ցաւում է որ՝ գործերի պատճառով անկարող է հեռանալ Մարսելից։ 6) յայտնի գրականագէտ Պ. Նորայր Բիւզանդին — որի հրաժարման պատճառը այն է, որ ինքը միջոցներ չ'ունի Սդոկօմից մինչև Ժընէլ ճանապարհորդելու, իսկ կարգ։ յանձնաժողովը անկարու էր այդ մեծ ծախքը իր վրայ առնել։ 7) Վիեննայի և Վիեննետիկի Միիթարեան Միաբանութիւններին, որոնցից առաջինից պատասխան չը ստացանք, իսկ երկրորդը ցաւ է յայտնել, որ «իրանից անկախ պատճառներով անկարողէ մասնակցել»։ Մինք դիմամբ այդ ամէնը առաջ բերեցինք, ցոյց տալու համար, թէ ինչպէս մեր հիմնարկութիւնները, երբ նրանց ասիթ և միջոց են տալիս արտայատելու իրանց կարծիքները, կամ շփումն ունենալու մի այնպիսի կարեւոր շրջանի հետ, ինչպէս ուսանողական շրջանն է, հրաժարվում և մեկուսացած են մնում իրենց յատուկ պատճառաբանութիւններավ։ Զեղ անշուշտ հետաքրքրական տեղե-

կութիւններ ստանալ Եւրոպայի հայ օւսանողների թուի և դասաւորութեան՝ մասին : Յպւումկնք որ մենք անկարող եղանք ներկայ ժողովի համար ապագրել մեր «Տեղեկագիւռը», որը պիտի պարունակէ թէ վիճակագրական տեղի կութիւններ և թէ այլ քաղաքացքներ «Միութեան» մասին : Դա անկարող եղանք անել միայն այն պատճառով, որ «Առանձնադրսթեան» հաստատումից մինչեւ Համագումարը հազիւ երկու ամիս ժամանակ կար : Դրա պահանջ լրացնելու համար՝ պաշտենք բերում մի քանի թիւեր (թիւերը բաց են թողնւած) :

Ամերիկայի հայ ուսանողների թուի մասին տեղեկութիւններ բոլորովին շռնենք : Այստեղի հայոց լրագրութեան միջացով կարգ . յահճանաժողովը հրաւել կարդաց նրանց՝ յարել « Միութեան » և նոյն խոկ ուսաջարկներ անել Համազումարին, եթէ ցանկանում են . առկայն ժամանակի կարծութեան պատճառով գեռ պատպախան չենք ստացիլ : Այսպիսի մի կապ հաստատելը Ոտպատանի մեր հայրենակիցների հետ — մենք նոյնպէս դանումկներ ցանկացի :

Առհաստակ այդ կապը բոլոր ուսանողների հետ աւելի ամրապնդելու համար, կարդ. յանձնաժողովը՝ ոչինչ աշխատանք չը խնայեց՝ «Միութեան» դիւնքը կանոնառութելու և գործափարութիւնը լուս հիմքերի վրա դնելու համար։ Աշխատեցինք բոլոր զբաւոր դիմումների պատասխանելու և յաճախի յարաբերութեան մէջ մտանք ընկերների հետ՝ շըրջաբերականների միջացագի։ Բացի դրանից, որպէս զի միջացանք բոլոր ուսանողներին յարաբերութեան մէջ մտնելու կարգ՝ յանձնաժողովի հետ՝ դիմեցինք լուրսպական հայ մասովի միջնորդութեանը, մեր շըրջաբերականները և ծանուացագրելու համար։

Հայոց մամուլը Երովայում, պէտքէ խոստովանինք շնորհակալութեամբ, առանց կուսակցութեան խարութեան, մեծ համակրութեամբ և նոյն իսկ ոգեսրութեամբ ողջունեց «Միութեան» նոր «Կանոնադրութեան» նախատեսած ձեռնարկները, և ըստ զլացաւ հրաւեր կարդալու թէ՛ ուսանողութեան և թէ հասարակութեան աջակցութեան ձեռք կարկառու։ Յօյս ունենանք որ այս ջերմ հրաւերները ու առանց արդինքի չանդնին։

Կարգադիր յանձնաժողովը մի քանի օր առաջ պատրաս-

աեց Համազումարի «Օրսկարդը», որի օրինակները գուք
ունիք ձեռքի տակ: Գա ուսանողական արամադրութիւն
ների ամիովումն է: Այդտեղ դռք կը գտնէք թէ այն
գուստիունների անսնները, որոնք արձագանք տուին մեր հրատ
էրին, և թէ այն առաջարկների ցանկը, որ ուսանողու
թիւնը գնումէ Համազումարի կրիտիկայի տակ:

Նախագահ Կարգադիր Յանձնաժողովի
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ : - Առաջին նիստին Կար-
գադիր Յանձնաշողովի նախագահը, բացման ճառին մէջ
նկատեց որ ներկայ համագումարը կը զուգագիպի, մեր
կուլտուրական վերածնութեան յիսնամեակին և հայ Յե-
ղափոխութեան շարժման տաօնամեակին հետո ու առաջարկեց
յարգել հայկական շարժման զոհերի յիշատակը ոտքի կանգ-
նելով որ և կատարուեցաւ : Ապա Լոգանի, Բերլինի և Լի-
էժի պատգամաւորները ողունեցին համագումարի բացումը
փոքրիկ ճառերով : Քիւրօյի ընարութենէն հարքը՝ ժողովին
ներկայացնեցաւ Կարգադիր Յանձնաժողովին վերև յիշուած
համարատուութիւնը :

Սոյն մողովին մէջ որոշուեցաւ Օրսակարգի նիւթերու գառառութեան մէջ փոքրիկ փոփոխութիւն մտցնել . այնեւ նախ լոնել այն դասախճանութիւնները , որոնք կը վերաբերին հայոց հարցին , յետոյ անոնք՝ որոնք կը վերաբերին Կովկասի և ապա մենացածները :

Ժաղովը տեսեց ութ՝ օր և ունեցաւ 16 նիստ։ Այդ նիստում մէկ մասը նուիրուեցաւ Ռւսանողական առաջարկներու քննութեան։ իսկ մեծ մասը դատախճառութիւններու և անող քննադատութեան։ զայդ ուժով զանաբանու

Անկարող լվանով, ինչպէս արդէն յիշուած է յառաջարանին մէջ, տպագրել վիճաբանութիւններու և ործումներու վերաբերեալ մանրաւուսուքիւնները, կը բաւականանանք հրատարակելով «Օրտակարգը»: Կաւելցնենք միայն որբանախոսութիւններու և վիճաբանութիւններու ամրող լնոթացքին մէջ, ժողովը տաք և եռանդգուն համակրութիւն:

Համագումարը, իմիջի այլոց, որոշեց համակրութիւն յայտնել Ասկեղոսական շարժման, որ զատկէտերթ կը չափէ հայկական շարժումը, ինչպէս և այն Երրորդացինե-

բուն՝ որոնք պաշտպան հանդիսացած են Հայկական դատին։
Այդ նպատակով երկու հետագիր ուղղուեցան մէկը Փարփա
Pro Armenia — և Խմբագրութեան, միւսը Սօֆիա։ Մա
կեդոնական Բարձր։ Կօմիտէին։ Աչա՝ վերջինին ուղղուած
հեռագիրը։

«Երոպայի Հայ Ուսմողակամ Միութեամ Բամազումարը՝ կա
յացած Միամիէնում, արտայայտուէ մեզ իւր խորիս Բամականքը։
Թիւրքական բռնութեամ զո՞ն Հայաստամի զաւակները, կանգնած
արխմելուայ հայրենիքի առջև, ամէլարող իմ չյիշել արեամ, կոռի և
յոյսերի երկրորդ հայրենիքը — Մակեդոնիամ։ Դժբախտութիւնը մեզ
միացրեց, թող այդ միութեամը լիսի աւելի ամուս ընդհանուր կոռի
մէջ։ Ողջոյն ազատ Մակեդոնիային»։

Համազումարը ստացաւ մակեդոնական Բարձր Կօմիտէին
Հետեւեալ հեռագիր պատասխանը։

«Խորապէս յուզուած՝ ուղարկում իմը միր ամկեղծ շմորնաւու
րութիւնները՝ միր զբախտակից ելլայրմերին։ Զեմք զիշամի ոչ
մի ձմշամ և ոչ մի ուժի տուաջ և կը շարունակներ միր ազմի
պայքարը արատութեամ Բամար, համարու կոռուկու մատիկ ապա-
զառում ըմբաժուր թշմարու գէմ՝ քաջարի ճայերի նեա։
«Կեցէ ազատ Հայաստան։»

Եիստերէն երկուքին մէջ Հարց յարսւցուեցաւ Կանոնա-
գրութեան մէկ քանի կէտերու վախիսութեան մասին,
առկայն ահագին մեծամանութիւնով որոշուեցաւ անփոփի
պահէլ։

Տասներորդ նստին մէջ Համազումարը՝ շեշտեց Ամերիկայի
և Ռուսաստանի Հայ ուսանողներու հետ կապեր Հաստատեաւ
անհրաժեշտութիւնը, Հաւանութիւն տալով արդէն կար-
դադիր յանձնաժողովի ըրած փոքրերուն։

Համազումարի վերջին նիստը նույիրուեցաւ 1^o, նշանի,
2^o, Համազումարի տեղի և ժամանակի և 3^o, Լիազօր Կօ-
միտէի ընտրութեան խնդիրներուն։

Որոշուեցաւ նշանի խնդիրը յետաձգել մինչև յաջորդ
Համազումարը, իսկ յաջորդ Համազումարը կայացնել Ժը-
նէլի մէջ Զատակի տօներուն։

Գաղտնի քուարկութիւնով Լիազօր Կօմիտէի անդամ ըն-
տրուեցան՝ հետեւեալ հինգ անձինք Մ., Յ., Փարփա, Խ.,
Մ., Ֆընէվ, Հ., Օպան, Լ., Ա., Յիւրիիս, Մ., Գ., Միւնիէն, ընտրուեցան նաև երկու փոխանդամ՝ Յ., Ա., և Պ., Յ., Գ.
մասնաւութեան մէջ, մաղովը շնորհակալութիւն յայտնեց
Կարգադիր Յանձնաժողովին անոր ցոյց տուած եւանդին
Հումար։ Կարգադիր Յանձնաժողովը իր կողմէն խորին

Գնը Նիւնէնէլ նիւնէլ Մամարի, Մըլլագիր, Համազումարի, Ակդ և
15 Նիստերուն մէջ մանրամասն քննութեան ենթարկուե-
ցաւ և ընդունուեցաւ ոււաշիկայ շրջանի գործունէութեան
ծրագիրը՝ առաջարկուած Կարգադիր Յանձնաժողովի կող-
մէն։ Ծրագրի զիխաւոր կէտերն են։

I. — Պրօպականէ երրոպական մամուշի մէջ Հայոց Հարցի
մասին։

II. — Կօնքիրանները յօգուտ Հայկական գատի նշանա-
ւոր եւրոպացիներու ձեռքով, Եւրոպայի զիխաւոր քաղաքնե-
րուն մէջ։

III. — Միէ ժարովածու, ֆրանսերէն լեզուով պատկերա-
զարդ, նշանաւոր եւրոպացիներու մասնակցութիւնով, որ
պիտի պարունակէ լուրջ ուսումնակրութիւններ Հայաստա-
նի, Հայերու և Հայոց Հարցի մասին, և եւրոպացիներու
ձեռքով զրուած կոչեր ի նպաստ Թրքահայերու։

IV. — Գիւնուն միշագային ուսանողութեան։

V. — Գրքեր Հայերէն և օտար լեզուներով Հայոց Հար-
ցին վերաբերալ։

VI. — Նիշրական նպաստ՝ Թրքա — Հայաստան մարդ ու-
ղարկելու և տեղեկութիւններ բերելու համար. և Պրօ Ար-
տեմիուն՝ որ արգէն պրօպականդ Կընէ յօգուտ Հայկա-
կան գատին։

Գործունէութեան ծրագիրը իրագործելու Համար, Համա-
գումարը, Համաձայն Կարգադիր Յանձնաժողովի Հետ,
ցանկութիւն յայտնեց դիմել Հանգանակութեան Հայոց Հա-
ստատութեան բոլոր շրջաններուն մէջ թէ ուսունաղնե-
րու միջոցով և թէ անկախ։ Ի միջի այլոց, Համազու-
մարը որոշեց 1^o, Բարոյական պարտաւորութիւն գնել ներ-
կայ եղող պատգամաշորներու վրայ որ երբ վերադառնու-
իրենց ընկերներու շրջանը, ձեւնարկեն Հանգանակութեան,
և 2^o, Հայրենիք վերադարձող Միութեան բոլոր անդամնե-
րը՝ պարտաւոր են դրամ Հանգանակել յօգուտ Միութեան
գանձարանի։ Փողովականներէն երեք օրիորդ և ութ պա-
րաներ, հրապարակով յանձն առին այդ պարտականու-
թիւնը, որ և մտցուեցաւ արձանագրութեան մէջ։

Փակման նստին մէջ, մաղովը շնորհակալութիւն յայտնեց
Կարգադիր Յանձնաժողովին անոր ցոյց տուած եւանդին
Հումար։ Կարգադիր Յանձնաժողովը իր կողմէն խորին

շնորհակալութիւն արտայայտեց Արքանիւնի Ընկերներուն
բոլոր ժողովականներուն ցոյց տուած սիրալիր ընդունելու¹
թեան համար, ինչպէս և այն ընկերներուն որոնք այդ
քան մեծ թռուլ փութացած էին ներկայ լինել Զսրութ
համագումարին :

Ղիազոր կօմիտէն, կազմակերպուած գամագոռամքին մէջ,
քիչ յետոյ սկսաւ իւր զործունէութիւնը նախ կազմելով
իւր ընելիքներու մանրամասն ծրագիրը։ Յուղիս ամսուն
հրատարակեց ուսանողական մարմիններուն ուղղուած հետ-
և տեսալ շրջաբերական նամակը։

Ա. Դիմումն Երտպական ուսանողութեան։ Մէջ շրջաբերական ֆրանսերեն լեզուով՝ ուզած Երտպական բոլոր ազգերի ուսանողաթիւններին, Պարփաք միջազգային բիւրոի միջոցով, հրատիրելով Նրանց Համակրութիւն յարացանել իրանց շրջաններում դէպի Հայկական քառը։ Ծայնը գերմաններէն և անգլիերէն, եթե կարիք լինի առաջարկ

Բ. Բրօշիչը, Հայոց հարցը համառօսաւ և ապգու կերպավ եւդպական հասարակութեան գեւ ևս անտեղեակ շրջաններին ներկայացնելու համար պատրաճաել մի բրուշեր Փրանսերէն լեզով, կրւած, Պարիզի յայտնի հրատպարակախոս Ներփայ մէկի ձեռքով, տպագրել մօտաւորապէս 5,000 օր, և ձրիաբար տարածել:

Գ. Մեծ ժողովածուն, «L'Arménie et la Question Arménienne» վերնագրով։ Դաս պիտի լինի մի չքեզ և ըստուար հատոք, ֆրանսակերէն, որը պիտի պարօնակի մի կողմէ մից նշանաւոր Եւրոպացիների կողը ի նպաստ թիւրքահայերի ազատութեան, միւս կողմից պիտի ամիսոփի, իրրե լիակատար ժողովածու, այն ուսումնակիրութիւնները, որնք վերաբերում են հայոց հարցին, հայոց գրականութեան, պատմութեան, առաջացրութեան, հայերի գերեխն Աթինն Ա.

սիայտւմ՝ նրանց քսդաքական շարժման և հայկական յեղափոխութեան, զարդարուած բազմաթիւ նկարներով և տեսարաններով։

Ծակօթ. — Ցօզուտ «Մեծ ժողովածուի» մինչև այժմ Միաւթեան զանձարանում ստացւած է մօտ 7,000 ֆրանք:

Գ. Կոնքիրականներ և Պրոպագանդ : Հասարամկական կարծիքը ի նպաստ հայոց հարցի դարձնելու համար՝ 4) կազմել կօնֆէրաններ Եւրոպական զիխաւոր քաղաքներում յայտնի եւրոպացիների ձեռքով (ծախքը հոգում է Միութեան գանձարանը) և 2) Գրել յօդուածներ Եւրոպական մամուլի մէջ՝ զիխաւորապէս Գերմանիայում, ուր այդ պրոպագանէ գը աւելի թոյլ է: Այդ նպատակով Միութեան անդամները կազմում են տեղական շրջաններ՝ լրագիրների հետ յաւբերութեան մէջ մտնելու համար: Մատադրութիւն կայ կամեմ մի սիւրօ՞ նիւթեր մատակարարելու մտքով:

Ե. Եպաստեր: Տալ Միութեան միջացներից՝ 1) 4,000 ֆրանք – Նպաստ «Pro Arménia» – ին, որ քաջարար ծառայում է հայոց գատին և 2) 500 ֆրանք՝ մարդ ուղարկելու թերքաց՝ Հայոստան՝ տեղեկութիւններ հաղորդելու համար։

ԶԵՐԱՎՐԿԵՐՈՎ կարգադիր Յանձնաժողովի հետ միասին
այս որոշումների իրագործման, Լիազօր Կօմիտէն խնդրում
է **ԶԵՂ**, Ընկերներ, արժարժել սրանց կարեւորութիւնը բոլոր
շրջաններում և նպաստել զորին - թէ դրամով, և թէ
անձնական աջակցութեամբ:

Ընկերական բարեւերով

ФЕДЕРАЛЬНАЯ АРХИВНАЯ СЛУЖБА РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ
ПОДЛИЧНАЯ БИБЛИОГРАФИЯ
ФОНДЫ № 1922
7/11/1922

Piligrimler,

ինպէս ձեզ յայտնի է, „Եւրօպայի հայ ուսանողական Միութեան“ անցեալ տարւայ Համբագումարը որոշեց, ի թիւս այլ ձեռնարկների, կազմակերպել զանազան կէտերում կօնքիրկան սեկրետ հայոց Հարցի Համար, Եւրօպացիների մասնակցութեամբ, և ի նպաստ ողջն Հարցի պրօպագանդ

անել եւրօպական մամուշի մէջ, զետեղելով յօդւածներ ու
մատակարարելով տեղեկութիւններ :

Համաձայն այդ որոշման՝ Միութեան Լիազօր Կօմիտէն նախաձեռնող հզաւ հրապարակական մի մեծ կօնֆէ-
րանսի, որ աեղի ունեցաւ փետրւարի 40-ին Ժընէ վում և
որի համար յատկապէս հրաւիրւած էր յայնի ֆրանսիացի
պուբլիցիստ-հայասէր ֆրանսիս դը Պրեսանս :

Կօնֆէրանսը, որին նախագահում էր Ժընէ վի կառա-
վարութեան չէք քարտ ֆավոն և որը գրաւել էր զէպի
Վիկտորիա Հալ վիթխարի դահլիճը հաղարաւոր մարդիկ (ա-
հագին բազմութիւն դուրս մեց աեղ շինելու պատճառով)՝
աղատասէր քաղաքի հասարակութեան բոլոր խաւերից՝
պատկեց արտակարդ աջազութեամբ, որ և արձանազրւեց
շվեյցարական ինչպէս և ուրիշ երկիրների լրագիրներում։
Համակրական արտայայտութիւնների արժանացան թէ Հայէ
երը, թէ բանախասը և թէ „Եւրոպայի հայ ուսանողական
Միութիւնը“, որը կազմակերպել էր այդ հրահանգիշ բա-
նախառութիւնը :

Ուրախ ենք հաղորդելու, որ կազմակերպւում է և մօտ
ապագայում տեղի պիտի ունենայ Բերլինում, համբաւաւոր
սօցիալիստ-թէքրէտիկ՝ Խորարդ Բերնշտայնի հրապարա-
կական կօնֆէրանսը՝ նոյնպէս Հայկական խնդրի մասին, մի
փոք, որ առաջինն է Գերմանիայում։ Բացի գրանից ծրա-
գըրւած է կօնֆէրանսներ կազմել նաև Բրիտել և եթէ ա-
ջողւի՛ Հռոմ։

Բնիկերներ,

Հարկ շնկայ ապացուցանելու, թէ որպիսի անվիճելի օգ-
տակարութիւն ունին այդ կօնֆէրանսները և բնդհանրա-
պէս հայանպատ պրօպագանդը՝ Հայրենիքի ներկայ տագ-
նապալի վիճակում։ Հասարակական կարծիքի մեծ նշանա-
կութիւնը հայկական խնդրում շեշտեց ինքը Դեկանէ,
Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը՝ յունւարի 20-ին
արտասանած իր նշանաւոր նառի մէջ։ Եթէ հանրային գի-
տակցութեան բանկումը չի կարող լուծում տալ հայկական
ճգնաժամին, գէթ նա կարող է կանխել Մեծ - Մարդա-
պանի նորանոր հարւածները։ Եւ վերջին երկու տարւայ
անցքերը վկայում են, որ նա համաւմ է այդ նորատակին։

Զանանք ուրեմն, մեր ուժերի ներածին չափ, յուղել հա-
սարակական կարժիքը և ուղղել նրա ալիքները պաշտօնական
Եւրօպայի գատապարտելի անտարլերութեան դէմ։

Ցոյց տանիք Եւրօպային, ինչպէս և մեր հասարակութեան
թերաչաւատ մասին, որ հայ ուսանողութիւնը՝ ինչպէս մի
մարմին՝ չոր-ցամաք ուսման երկրպագու չէ և ոչ էլ զծուձ
ու անսիրտ հսասիրութեան ներկայացուցիչ, այլ որ նա ըն-
դունակ է հանրային-ալտրուիտական թոփչքների ևս, որ
նա համալսարանական նատարանի վրայ անզամ զիտէ
տանջւել իր ազգակիցների անբաւ տանջանքներով։

Լիազօր Կօմիտէն՝ ընկերաբար՝ հրաւել է կարգում Եւ-
րօպայի հայ ուսանողական խմբերին՝ կատարել իրանց պարու-
քը, լնդհանուր և տեղական կօնֆէրանսներ կազմելով, և
իրանց բնակած քաղաքների մամուլի մէջ պրօպագանդ ա-
նելով։ Հողը պատրաստ է ամէն տեղ. հարկաւոր է եռանդ
ու նախաձեռնութիւն։

Անդրաժիշտ է համերաշխ, ներդաշնակ գործակցութիւն
ընդհանուր մի խնդրում, որի հանդէպ պէտք է չքանան
անձնական նեղ նկատումները, անհիմն պատականումները։

Հարկաւոր է ներշնչել հաւատով և հեռու վանել ամուլ
յունեանութիւնը։ Եթէ նոյն խակ այս կամ այն դէպում
մեր ճիգերը ապարդիւն անցնեն, մենք դարձեալ չպիտի
զգանք, չպիտի վհատենք։ Բաւական է այն գիտակցու-
թիւնը, որ մենք կատարում ենք մեր մարդկային և մեր
հայ-ուսանողական պարտականութիւնները։

Դէպի գործ, ընկերներ։

Ընկերական բարեւմերով

ԺԾՆԵՎ

ԼԻԱՅՈՐ ԿՈՄԻՏԵ

Սոյն Տեղեկագրի մէջ չի մտներ Լիազօր Կօմիտի և Կար-
գագիր Յանձնաժողովի վերջին չըշանի գործանելութեան
համբաւաւութիւնը, որ պիտի ներկայացուի առաջիկայ հա-
մագումարին, որ գումարելու է Ժընէվ Մարտի 31-ին։

Любъ съвѣтъ избранииъ ехѣнъ иерархиииъ архиепископъ
Софийскаго епіскопъ иже въ съвѣтъ. Историкъ писатъ въ
то времѧ ехѣнъ избранииъ въ то же самое възмѣти
желѣзъ въ то же времѧ избранииъ епіскопъ писатъ въ
то же възмѣти иже възмѣти ехѣнъ избранииъ въ
то же времѧ избранииъ епіскопъ писатъ въ

Հայութեան աշխատավոր կա պահանջան ոչ բայց առ
այս առաջը և պայման պարզութեան մաստիք պահանջան
ապար աշխատ ընդունած մահման մասնակութեան առ պարզ
ա պահման պահանջան մաստիք մ պահանջան ու ա
ու պահանջան է առ պահման պահման պահանջան առ պահանջան
ըստ և պահման ըստ և պահման պահման պահանջան առ պահման

Wissenschaftliche Beobachtungen

ուղիղ և անօդական լուծուն ու մեր գրաբարքը առաջ մտնելու մասից պահանջվություն պարագանելու պարագանելու առաջնային նշանակությունը առաջ է գտնվում:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԾԱՌԱՋՐԱՎՈՐԱԿԱ 2003/03/2

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գլուխ օջախ պարզության օջախ

ԵՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍՏԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

201 *Journal of Management*

50	<u> </u>	B.D.P. 311
1		
1		
0		
3		
1		

Կարգադիր Յանձնաժողովը իր ծեռքի տակ ունի Եւրոպյայի հայ Ռւսանողութեան վերաբերեալ մանրամասն վիճակագրական տեղեկութիւններ , մշակուած մեր ընկեր Սարգսեանի ծեռքով , չնորհակարութեան արժանի խնամքով : Այդ տեղեկութիւնները պէտք է մտնէին ներկայ «տեղեկագրի» մէջ , սակայն տպարանական պատճառներով անկարելի եղաւ այդ , որով մենք ստիպուած եղանք յետաձգել «Վիճակագրութեան» տպագրութիւնը , որպէս զի «տեղեկագրի» գէծ միւս մասերը կարելի լինէր հասցնել ներկայ ամագումարին : Այս «տեղեկագրի» մէջ մտցնում ենք մէկ քանի համառօտութիւններ միայն այդ վիճակագրութիւնից , թունելով ամբողջ հրատարակութիւնը մօտիկ ապագայի :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵԿԲՈՂԱՅԻ

ԳՐԱԴԱՎՈՅՑ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՈՒՍՏԱՆՈՂՆԵՐԻ 1900 ԹՈՒԻ

ՃԳԱԾՎԱՆ ՀԱՅԿԱՆԻ ԲՈՒԺԱՅԻ ՑՈՒՅ ՎԵԼՄՐՈՒՅԻ

Φυλακέων πολιτεία 102

65

Ընդհանուր գումար՝ 270

IV. ՄԱՍՆԱԿԻ ՏՐՈՒՅՆՈՒՆ (Ա.)

ՓԻԼԻՊՓԱՅԹԻԹԻԹԻԹԻ

Հայուսանողներ՝ բնդամենը

ՊԵՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱԾ

ԲՆԱԳԻ

ԳԻՂԱՄԱՆՈՒՅՆ

Ա.ՄԱՅԱՐՈՒՅՆ

ՄԱԺԵՄԱՏԻԿԱ

ԿԵՆՏՐՈՐԾՄԻՒ

ԴԵՂԱԳՈՐԾՄԻՒ

ԲՆԴԱՄԵՆԸ

ԲՆԱԳԻ

ԳԻՂԱՄԱՆՈՒՅՆ

Ա.ՄԱՅԱՐՈՒՅՆ

ՄԱԺԵՄԱՏԻԿԱ

ԿԵՆՏՐՈՐԾՄԻՒ

ԴԵՂԱԳՈՐԾՄԻՒ

ԲՆԴԱՄԵՆԸ

ԲՆԱԳԻ

ԳԻՂԱՄԱՆՈՒՅՆ

Ա.ՄԱՅԱՐՈՒՅՆ

ԲՆԴԱՄԵՆԸ

ԲՆԱԳԻ

ԳԻՂԱՄԱՆՈՒՅՆ

Ա.ՄԱՅԱՐՈՒՅՆ

ԲՆԴԱՄԵՆԸ

ԲՆԱԳԻ

ԳԻՂԱՄԱՆՈՒՅՆ

Ա.ՄԱՅԱՐՈՒՅՆ

ԲՆԴԱՄԵՆԸ

ԲՆԱԳԻ

ԳԻՂԱՄԱՆՈՒՅՆ

Ա.ՄԱՅԱՐՈՒՅՆ

V. ՄԱՍՆԱԿԻ ՏՐՈՒՅՆՈՒՆ (Բ)

ԲՆԴԱՄԵՆԸ ՓԵԼԻՊՓԱՅԹԻԹԻԹԻԹԻ ԳԻՂԱՄԱՆՈՒՅՆ Ա.ՄԱՅԱՐՈՒՅՆ

ՊԵՏՈՒԹԻՒՆ	Հայուսանողներ՝ բնդամենը	ԲՆԴԱՄԵՆԸ	ԳԻՂԱՄԱՆՈՒՅՆ ՓԻԼԻՊՓԱՅԹԻԹԻԹԻ	Ա.ՄԱՅԱՐՈՒՅՆ
Անդիխ	7	2	2	—
Աւաստիս	26	1	—	—
Բելիխ	6	—	—	—
Գեղահիխ	86	37	8	—
Զուցիխ	51	40	17	5
Խառիխ	25	42	12	—
Ցրահիխ	70	43	5	—
Պուստիխ	274	136	14	—
Հայուսանողներ՝ բնդամենը	71	34	9	—
ԲՆԴԱՄԵՆԸ	14	14	3	—
Ուստասան	14	9	3	—
Տաճկաստան	14	9	3	—
Ամէ պետութիւն	14	9	3	—
ԲՆԴԱՄԵՆԸ	54	49	10	—
Ուստասան	54	49	7	—
Տաճկաստան	54	49	3	—
Ամէ պետութիւն	54	49	1	—
ԲՆԴԱՄԵՆԸ	26	26	4	—
Ուստասան	26	26	2	—
Տաճկաստան	26	26	1	—
Ամէ պետութիւն	26	26	—	—
ԲՆԴԱՄԵՆԸ	14	8	2	—
Տաճկաստան	14	8	1	—
Ամէ պետութիւն	14	8	1	—
ԲՆԴԱՄԵՆԸ	19	14	1	—
Ուստասան	19	14	—	—
Տաճկաստան	19	14	—	—
Ամէ պետութիւն	19	14	—	—
ԲՆԴԱՄԵՆԸ	6	6	3	—
Ուստասան	6	6	2	—
Տաճկաստան	6	6	2	—
Ամէ պետութիւն	6	6	2	—
ԲՆԴԱՄԵՆԸ	1	1	1	—
Տաճկաստան	1	1	—	—
Ամէ պետութիւն	1	1	—	—
ԲՆԴԱՄԵՆԸ	2	2	2	—
Ուստասան	2	2	2	—
Տաճկաստան	2	2	2	—
Ամէ պետութիւն	2	2	2	—
ԲՆԴԱՄԵՆԸ	1	1	1	—
Ուստասան	1	1	—	—
Տաճկաստան	1	1	—	—
Ամէ պետութիւն	1	1	—	—
ԲՆԴԱՄԵՆԸ	5	5	3	—
Ուստասան	5	5	2	—
Տաճկաստան	5	5	2	—
Ամէ պետութիւն	5	5	2	—
ԲՆԴԱՄԵՆԸ	3	3	1	—
Ուստասան	3	3	1	—
Տաճկաստան	3	3	1	—
Ամէ պետութիւն	3	3	1	—
ԲՆԴԱՄԵՆԸ	2	2	1	—
Ուստասան	2	2	1	—
Տաճկաստան	2	2	1	—
Ամէ պետութիւն	2	2	1	—
ԲՆԴԱՄԵՆԸ	1	1	—	—
Ուստասան	1	1	—	—
Տաճկաստան	1	1	—	—
Ամէ պետութիւն	1	1	—	—
ԲՆԴԱՄԵՆԸ	0	0	0	0

ԵՒՐՈՊԱՅԻ ՀՅՅ-ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ

ՄԻՌՈՒԹԵԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Մշակուած 8իւրիսի համագումարում, 1900 թ. նոկտիմբերին.
Հաստատուած ուսանողական մարմիմերի կողմից 1901
յունուարին.

I. ՆՊԱՏՈՒ

1. Բարոյական կապ հաստատել Եւրոպայի հայ ուսանողների և ուսանողական խմբերի մէջ:
2. Նպաստել նրանց ծանօթութեանը հայոց կեանքի և մանաւորապէս հայերի քաղաքական կացութեան չետ:
3. Զգտել ծանօթացնել հայերը Եւրոպացիներին:
4. Հրատարակել հայոց հարցին վերաբերեալ և նոյն հարցին նպաստով՝ ինքնուրոյն և թարգմանական զրգեր հայերէն լեզով: Նոյնպէս և ստար լեզուներով, եթէ կարիք լինի:

ԾԱՆՈԹ. Միութիւնը կարող է միւթապէս օգմել Եւրոպայում գոյութիւն ունեցող հայկական ուրիշ միմթարկութիւններին՝ մոյս նպատակին ծառայող հրատարակութիւնները ամելու համար:

II. ԱՆԴԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ

5. Միութեան անդամակցելու իրաւունք ունին Եւրոպայի բոլոր հայ ուսանողուհիները և ուսանողները, անկախ նոցա մասնակցութիւնից տեղական խմբերին:
6. Ամեն անդամ ընտրող է և ընտրելի:
7. Իւրաքանչիւր կիսամեակի անդամավճարն է երկու ու կէս ֆրանկ կամ երկու մարկ: Միութիւնը ընդունում է նաև՝ անդամներից և ոչ անդամներից կամաւոր նէքրներ, որոնք արձանագրուում են յատուկ մատեանում:

ԾԱՆՈԹ. Անդամները կարգադիր յամեմաժողովից ստանում են անդամագրին:

III. ԿԱԶՄԸ

Միութեան գործօն մարմիններն են՝ ա) Համագումար, (կոնգրէ), բ) Կարգադիր յանձնաժողով և գ) Լիազօր կոմիտէ:

IV. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

8. Համագումարը տեղի է ունենում տարեկան մի անգամ: Բացի տարեկան համագումարից, կարեղոր գէպքերում լիազօր կոմիտէն և կարգադիր յանձնաժողովը վոխագարձ համաձայնութեամբ կարող են հրաւիրել արտակարգ համագումար:

9. Համագումարը կազմում է՝ ա) պատգամաւորներից և բ) անդամներից: Պատգամաւորը ունի երկու ձայն, իսկ անդամը մի ձայն:

Պատգամաւորը գալիս է Հաւատարմագրով:

ԾԱՆՈԹ. Ոչ-անգամները կարող են մասնակցել համագումարին իրեն հիւրեր, միայն խորհրդատու ձայնով:

10. Ամեն մի քաղաքի Միութեան անդամները, որոնք կազմում են Տեղական մարմիններ, ուղարկում են Համագումարին պատգամաւորներ՝ ընտրուած համեմատական ներկայացուցչութեան սիստէմով: Միենայն քաղաքում գոյութիւն ունեցող իրարից անկախ ուսանողական կազմակերպութիւնները կարող են ուղարկել պատգամաւորներ՝ ընտրուած նոյն սիստէմով:

ԾԱՆՈԹ. Միութեան իրաքանչոր 10 անդամի նամարը ընտրում է մի պատգամաւորը՝ Որպէսզի չամսգումար ընթի կարող լինի մասնակցել և այն քաղաքները, որը անգամներին իրաւումը է որում ուղարկել մի-մի պատգամաւոր: Խոկ իթէ մի քաղաքում միայն մի կամ երկու անդամ կայ միամբ մասնակցում են մօտակայ ուսանուածաշատ քաղաքներից մէկի պատգամաւորական ընտրութեամ:

11. Պատգամաւոր ուղարկելու ժամկերը՝ նրա անկարութեան գէպքում՝ հոգում են ընտրողները: Այն գէպքում, եթէ որևէ քաղաքի ուսանողները՝ միջոցներ՝ չունենալու պատճառով՝ միանգաւիճն անկարող են հոգալ իրենց պատգամաւորի ժամկերը, կարգադիր յանձնաժողովը յանձն է ագնում հոգալ պատգամաւորի հանսապարհածակագը:

42. Համագումարը բաց է անում կարգադիր՝ յանձնաժողովին նախագահը, երբ նախապատրաստական մի ժաղավում եկած անդամները վճռում են, որ ներկայ եղաղների թիւը բաւարար է նիստերը բանալու համար։

43. Համագումարի իւրաքանչիւր նիստ միայն այն ժամանակ կանոնաւոր է, երբ նրան մասնակցում է Համագումարին եկած անդամների մեծամասնութիւնը։

44. Համագումարը ընտրում է՝ ամէն մի նիստի համար նախագահ, և երեք քարտուղար՝ բոլոր նիստերի համար։

45. Ընտրութիւնները կատարում են բաց քուէարշութեամբ և ձայների պարզ մեծամասնութեամբ։

ԾԱՆՈԹ. Նոյն ծևով իմ կայածում իմ վճիռները։

46. Համագումարի զրազմունքները աեղի են ունենում այն ծրագրով և օրակարգով, որ նախապէս կազմել է կարգադիր յանձնաժողովը։

ԾԱՆՈԹ. Համագումարին վերապահում է թրաւութք, անհատիչ գէպրում օրակարգ փոփոխութիւնն եթեարկել, իսկ ծրագրեց դուռ առաջարկած նարգերը, կարող ին նախագումարի զրազմութք նիւթ զանալ ըոլոր ներթական նարգերից յատոյ՝ ժողովականների մեծամասնութեամբ ցանկութեամբ։

47. Համագումարի զրազմունքներն են՝ ա) կարգադիր յանձնաժողովի և լիազօր կօմիտէի համարատւութիւնը, բ) նախահաւաք կազմելը, գ) ընտրութիւններ, դ) դասախոսութիւններ և ե) առաջարկութիւններ։

48. Դասախոսութեան առարկայ կարող են լինել միայն այն նիւթերը, որոնք անմիջական առնչութեան ունին հայկական կեանքի հետ, գերազանցութեան առաջով հայոց պատմութեան ու զրականութեան և հայոց ներկայ քաղաքական ու տնտեսական զրութեան։

49. Համագումարը իրեւ Միութեան բարձր առեւան, լիազօր է, կանոնագրութեան սահմաններում, ամեն տեսակ վճիռներ կայացնել։

50. Համագումարը որոշում է յաջորդ համագումարի աեղը և ժամանակը, նոյնպէս և այն քաղաքը, որի ուսանողութիւնը պիտի ընարեց իր միջից կարգադիր յանձնաժողով։

V. ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

21. Կարգադիր յանձնաժողովը բաղկանում է 5 անգամից և, եթէ կարիք լինի, 2 փախ-անդամից։ Յանձնաժողովը իր միջից ընտրում է՝ նախագահ, գանձապահ և քարտուղար։

22. Ամեն մի կարգադիր յանձնաժողովի զործունելութիւնը տեսում է մի տարեկան համագումարից մինչև միւսը։

23. Կարգադիր յանձնաժողովը՝ ա) պահում է գիւղանը և Միութեան կնիքը, բ) գանձում է անդամագնութերը, նուէրները և չոգում ծախքերը, գ) վարում է Միութեան բոլոր գրագրութիւնները, դ) մշակում և գրատարակում է Տեղեկագիրը։

ԾԱՆՈԹ. Տեղեկագիրը պարունակում է՝ ա) վիմակագրութիւնն եւ բարակացութիւնը նայ ուսանողների, բ) տեղիկութիւններ նախագումարի ու գ) ուսանողական ընկերութիւնների մասին եւ զ) զրամական և այլ մաշհմեր՝ քաղաքական կարգադիր յանձնաժողովի եւ լազօր կօմիտէի զործերից։

24. Միութեան գիւղնը և գոյքը գտնեում են կարգադիր յանձնաժողովի մօտ, որը և պաշտօնապէս յանձնում է իր յաջորդին՝ իր լիազօրութիւնը լրացած գէպրում։

25. Կարգադիր յանձնաժողովը իրաւունք ունի հրաւիրել մասնաւոր անձանց ու զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներին՝ մասնակցելու համագումարին դասախոսութիւններով։ Առանց կարգադիր յանձնաժողովի հրաւիրի ևս՝ նրանք կարող են մասնակցել համագումարին՝ նախօրոք յայտնելով կարգադիր յանձնաժողովին անելիք առաջարկութիւնների ու դասախոսութիւնների մասին։

26. Կարգադիր յանձնաժողովի գիւղումի համաձայն՝ Միութեան ամեն մի քաղաքի Տեղեկան մարմինները իրանց միջից ընտրում են մի կամ երկու աշխատակից անդամ, որոնք հանդիսանում են միջնորդ՝ կարգադիր յանձնաժողովի և տեղական ուսանողների մէջ։

VI. ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԵ

27. Համագումարը ընտրում է միութեան անդամներից, մի տարի ժամանակով, լիազօր կօմիտէ՝ բաղկացած

22851

32

5. Հոգուց: Կոմիտէի անդամները, Հարկուոր գէպքում, կարող են դիմել կողմանի ձեռնհամ անձանց աջակցութեանը:

28. Լիազօր կոմիտէի պաշտօնը պիտի լինի՝

ա) կազմել կօնֆէրանսներ եւրոպական զանազան քաղաքներում,

բ) ուզարկել կարևոր գասած գէպքերում ներկայացնեցիչներ,

գ) պրօպագանգ անել եւրոպական մամուլի մէջ հայերի և հայկական գործերի օգտին և

դ) կազմակերպել և ընթացք տալ զրեերի հրատարակութեան գործին, որի մասին յիշատակւած է 4-րդ յօդւածում:

VII. ՆՇԱԽՆԵՐ

29. Միութիւնը ունի իր նշանը և կնիքը: Նշանի ձեւը որոշում և հաստատում է Համագումարը: Կնիքը կրում է հետևեալ մակարութիւնը, «Եւրոպայի Հայ-Ռւսանողական Միութիւն» և նոյնը ֆրանսերէն «Union des Etudiants Arméniens de l'Europe»:

VIII. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

30. Կանոնադրութեան որևէ կէտի փոփխութեան, առաջարկ կարող է անել պատգամաւորի միջոցով համագումարին: Այն գէպքում, եթէ այդ առաջարկը ընդունվի ձայների $\frac{3}{4}$ մեծամասնութեամբ, նա կը ներկայացնի Միութեան բոլոր անդամների քուէարկութեան, և հաստատած կը նկատի, երբ ստանայ քուէարկողների $\frac{3}{4}$ մեծամասնութիւնը:

2013



